

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ՄԵԴՈՎԿԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՄԵԴՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ  
ԹԻՎ 21-Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ՄԵԴՈՎԿԱ 2017 ԹԻՎ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ
2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
- 2.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
- 2.2. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ
- 2.3. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ
- 2.4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ
- 2.5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- 2.6. ՀԱՄԱԸՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ
- 3.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ
- 3.2. ՀԱՄԱԸՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ
4. ՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ
5. ՀԶԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ
6. ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ /ՀԱՎԵԼՎԱԾ-1/
7. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿ /ՀԱՎԵԼՎԱԾ-2/

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

### ՀԱՐԳԵԼԻ ՀԱՄԱԳՅՈՒՂԱՅԻՆԵՐ

Ձեզ եմ ներկայացնում Մեղովկա համայնքի զարգացման ծրագիրը :

Համայնքի զարգացման ծրագիրը համայնքի սոցյալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնադնդիրների բացահայտման , ֆինանսական , տնտեսական , բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնադնդիրների լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

Մեղովկա համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագրի ընդունման նպատակն է սահմանել համարնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները :

Համայնքի զարգացման ծրագիրը իր մեջ ներառում է` համայնքի իրավիճակի բնութագիրը , վերլուծությունը և գնահատումը, համարնքի տեսլականը, ֆինանսական իրավիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը, ոլորտային ծրագրերը, գույքի կառավարման ծրագիրը, զարգացման ծրագրի մոնիթորինգը:

Համայնքի հիմնական պոռթկումներն են՝ գյուղացիները գտնվում են սոցյալապես վատ պայմաններում , երաշտի տարիներին գյուղացիները կորցնում են բերքի 70-80% , համայնքը զրկված է ոռոգման ցանցից, նրանց ապրուստի հիմնական միջոցն ստացվում է հողագործությունից և անասնապահությունից :

Գործազրկության պատճառով երիտասարդությունը գնում է արտագնա աշխատանքների: Կենցաղաին աղբահեռացում չի կատարվում:

Համայնքի մաս կազմող Կրուզլայա-Շիշկա գյուղի խմելու ջրի ցանցը , որը կառուցվել է անցյալ տարի 50-ական թվականներին , գտնվում է անմխիթար վիճակում , առկա է տարբեր հիվանդությունների առաջացման վտանգները :

Ծրագրի մշակմանը մասնակցել են Մեղովկա համայնքապետարանի աշխատակազմը , համայնքի ավագանին, ծրագիրը հաստատվել է համայնքի ավագանու անդամների կողմից :

1. Համայնքի իրավիճակի գնահատում  
Աշխարհագրական դիրքը, պատմական ակնարկ

Մեղովկա համայնքը իր մեջ ընդգրկում է՝ Մեղովկա և Կրուզլայա-Շիշկա գյուղերը, որոնք հիմնադրվել են 1928 թվին, 19-րդ դարի սկզբներին ցարական Ռուսաստանից արտրված Ռուս-մոլդկանների կողմից : Ներկայումս գյուղերը վերաբնակեցվել են 20-րդ դարի վերջին տասնամյակում Ադրբեջանական ՍՍՀ-ից բռնագաղթված և Հայաստանի տարբեր տարածաշրջաններից տեղափոխված հայազգի բնակիչներով:

Համայնքը ծովի մակերևույթից ունի 1600մ բարձրություն :

Համայնքը զուրկ է բնական աղբյուրների պաշարներից : Մեղովկա գյուղը խմելու ջուր ստանում է Տաշիր Քաղաքի ջրամբարից : Մեղովկա գյուղի խմելու ջրի և արտաքին և ներքին ցանցը կապիտալ վերանորոգված է:

Կրուզլայա- Շիշկա գյուղի ջրային ցանցը գտնվում է վթարային վիճակում, կարգավորիչ ջրամբարի հատակին և պատերին առաջացել են ճեխվացքներ որը պատճառ է հանդիսանում ջրամբար հասաց ջրի կորստյանը:

Համայնքը մառզկենտրոնից ունի 50,0կմ հեռավորություն, Վրաստանի պետական սահմանից հեռավորությունը կազմում է 16,0 կմ, Հանրապետական նշանակության ավտո մայրուղուց՝ 6,0կմ :

Համայնքը զուրկ է պատմաճարտարապետական հուշարձաններից:

Կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը զով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑՅԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

- . Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 12261.8 հազար դրամ
- . Համայնքի սեփական եկամուտները կազմում է 7860.9 հազար դրամ
- . Համայնքում չկան արդյունաբերական ձեռնարկություններ:

. ԱՂՈՒՍՅԱԿՈՒՄ ԲԵՐՎԱԾ ԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ ԵՎ ԾԱՎԱԼՆԵՐԸ 2016Թ

Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Ցանքատարածության չափը	Արտադրանքի քանակը
ՑՈՐԵՆ	130,0h ա	455տ
ԿԱՐՏՈՖԻԼ	13,0h ա	20տ
ԿԱՂԱՄԲ	0,12h ա	4,0տ
ԿԱԹ		580տ
ՄԻՍ		90տ
ԲՈՒՐԴ		70կգ
ՁՈՒ(հատ)		59500
ՄԵՂԸ		2.0տ

Անասունների տեսակը	Գլխաքանակը (գլուխ)
Խոշոր եղջերավոր անասուններ	938
Այդ թվում կովեր	474
Մանր եղջերավոր անասուններ	35
Այդ թվում մայրեր	25
Խոզեր	149
Այդ թվում մայրեր	13
Թռչուններ	766
Այդ թվում հավեր	595
Մեղվարնտանիքներ (հատ)	95

## ԾՐԱԳԻՐ-1

### ՄԵՂՈՎԿԱ ԳՅՈՒՂԻ ԱԿՈՒՄԲԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Մեղովկա գյուղի ակումբի շենքը վթարային վիճակում էր հայտնվել 1988թ. Սպիտակի եկրաշարժի հետևանքով, իսկ 1990-ական թվականներին սկսած նոր ակումբի կառուցման աշխատանքները կատարված է՝ 20-25%-ով:

### ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Հարկավոր է ավարտին հասցնել Մեղովկա գյուղի ակումբի կիսակառույց շենքի պատերի շարման ու տանիքի կառուցման, շենքի ներսի և դրսի հարդարման աշխատանքները, մարզադահլիճը կինոսրահը և մյուս սենյակները կահավորել ժամանակակից և հարմարավետ գույքով:

### ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակներն են՝

- 1 Աշխուժացնել համայնքի մշակութային կյանքը
- 2 Ակումբի դահլիճը տրամադրել համայնքի միջոցառումների անցկացմանը
- 3 Տոնական օրերին կազմակերպել մասսայական միջոցառումներ և երեկոյթներ

### ԾՐԱԳՐԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԼՈՒԾԵԼ ՄԻ ՇԱՐՔ ԿԱՐԵՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

- 1 Դմել Հ.Հ. կառավարությանը՝ նպատակային ֆինանսավորում տրամադրելու համար
- 2 Կազմել շինարարության նախագծային հաշվարկ
- 3 Ստեղծել նյութատեխնիկական բազզա
- 4 Կազմակերպել բարերարների և համայնքի ներդրումների հարցը

### ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- 1 Կազմակերպել գրադարանների գործունեությունը
- 2 Բնակչության ժամանակն ավելի արդյունավետ և հետաքրքիր դարձնել

### ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- 1 Ծրագրի իրականացումն սկսել 2017թ. ավարտել 2019թ.
- 2 Ծրագրի իրականացման նախնական մոտավոր հաշվարկով կպահանջվի 70.0 մլն հհ դրամ
- 3 Համայնքային ներդրումն կկազմի 3%

## ԾՐԱԳԻՐ 2

ՄԵԴՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Մեդովկա համայնքը գիշերային լուսավորությունից զրկված է 1990-ական թվականների սկզբներից

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Բառելավել համայնքի բնակիչների կուլտուր-կենցաղային կյանքը: Ծրագրի իրագործումով կլուծվի համայնքը բարեկարգ դարձնելու առաջնահերթ խնդիրներից մեկը

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Ծրագրի իրականացումը կկատարվի Մեդովկա համայնքի 2017թ-ի բյուջեի ֆոնդային մասի հաշվին

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագրի իրականացման համար նախնական մոտավոր հաշվարկով կպահանջվի մոտավեր 2.0մլն հհ դրամ

### ԾՐԱԳԻՐ 3

#### ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Համայնքապետարանի վարչական շենքը կառուցվել է 20րդ դարի 50-ական թվականներին և վերանորոգման չի ենդարկվել շենքի վրա առկա են 1988թ-ի երկրաշարժի հետքերը:Տանիքը գտնվում է խարխլված վիճակում,որը պատճառ է հանդիսանում անձրևաջրերի ներթափանցումը աշխատասենյակներ

#### ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՑՅԻՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Հարկավոր է ամրացնել շենքի պատերը,ամբողջովին փողել շենքի տանիքը,կատարել ներսի և դրսի հարդարման աշխատանքներ,սենյակները կահավորել ժամանակակից և հարմարավետ գույքով:

#### ԾՐԱԳՐԻՆ ԻՐԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԼՈՒԾԵԼ ՄԻ ՇԱՐՔ ԽՆԴԻՐՆԵՐ

Կազմել նախագծագրային հաշվարկ, ստեխծել նյութքտեխնիկական բազա,ձեռք բերել Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի համաձայնուտյունը` համապատասխան ֆինանսավորում տրամադրելու համար,լուծել համայնքի ներդրումների խնդիրը

#### ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իրականացնելով այս ծրագիրը,համայնքի կենտրոնում վոր կխոյանա մի գեղեցիկ շինություն,համայնքապետարանի աշխատակազմը կունենա հարմարավետ և համապատասխան գույքով կահավորված աշխատասենյակներ

#### ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագրի իրականացման համար նախնական մոտավոր հաշվարկով կպահանջվի 9.0մլն հհ դրամ համայնքի ներդրումն կկազմի 5%



#### ԾՐԱԳԻՐ 4

ՀՄԱՅՆՔԻ ԿՐՈՒԳԼԱՅԱ-ՇԻՇԿԱ ԳՅՈՒՂԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

#### ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Կրուլայա-Շիշկա գյուղի ջրագիծը կառուցվել է անցյալ դարի 50-ական թվականներին և մինչև գյուղի կարգավորիչ ջրամբարը ունի 2500մ երկարություն: Խոխովակաշարը տարբեր տրամաչափի խողովակների միացություն է, և մաշվածության հետևանքով հաճախակի են արաջանում վթարային վիճակներ: Գյուղի կարգավորիչ ջրամբարը նույն պես բարվոք վիճակում չէ, հատակին և պատերին հայտնվել են խոր ճեղքվածքներ որը պատճառ է հանդիսանում ջրամբար հասած ջրի առանց այնել նվազ քանակի կորստին, նույն վիճակն է նաև գյուղի ջրատարի ներքին ցանցում: Պատահել է, որ ձմռան ցրտաշունչ օրերին ջրատարը սառել է՝ գյուղը ամբոխջովին զրկելով խմելու ջրից:

#### ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՎՈՐ Է ՄԻ ՇԱՐՔ ԿԱՐԵՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

- 1 Կնքել պայմանագիր Հայաստանի սոցներդրումների հիմնադրամի հետ, որի համաձայն ծրագրի իրագործման համար պահանջվող գումարի 80%-ը կտրամադրվի հիմնադրամի կողմից իսկ 20%-ը կկազմի համայնքային ներդրումը
- 2 Ծրագրի իրագործման համար կազմել նախագծահաշվարկային փաստաթղթեր
- 3 Հայտարարել մրցույթ որոշելու աշխատանքներն իրականացնող շինարարական կազմակերպությունը
- 4 Ծրագրի իրականացման համար ձեռք բերել նյութատեխնիկական միջոցներ
- 5 Համայնքի բնակիչներից ստեխծել խումբ կատարվող աշխատանքները վերահսկելու համար

#### ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իրականացնելով այս ծրագիրը, գյուղի բնակչությունը կապահովվի խմելու ջրով, կբարելավվի գյուղի ազգաբնակչության սոցիալ-տնտեսական պայմանները

#### ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագրի իրականացման համար նախնական մոտավոր հաշվարկով կպահանջվի 10.0մլն հհ դրամ

## ԾՐԱԳԻՐ- 5

ՄԵՂՈՎԿԱ ԳՅՈՒՂԻ ՄԵԿ ԹԱՂԱՄԱՍԻ ՋՐԱՅԻՆ ՑԱՆՅԻ ՎՈՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՄԵՂՈՎԿԱ ԳՅՈՒՂԻ ՋՐԱՅԻՆ ՑԱՆՅԻՆ ՄԻԱՑՈՒՄ

Մեղովկա գյուղի մեկ թաղամասը խմելու ջուր է ստանում գյուղի մոտ գտնվող Փլուկ սարի ստորոտից բխող մի փոքրիկ աղբյուրից:Ջրագիծը Մեղովկա գյուղի ցանցի հետ միացված չէ,ներկայումս թաղամասը խմելու ջրով ապահովող ջրատարը և կարգավորիչ ջրամբարը գտնվում են վթարային վիճակում:

Ներկայումս Մեղովկա գյուղը խմելու ջրով ապահովող ներքին և արտաքին ցանցերը վերանորոգված են և գյուղը ջուր է ստանում Տաշիր քաղաքային համայնքի կարգավորիչ ջրամբարից:Ծառացել է հարց վերոնշյալ թաղամասի ջրատարը վերանորոգել և միացնել գյուղի ջրային ցանցին:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՎՈՐ Է ԼՈՒԾԵԼ ՄԻ ՇԱՐՔ ԿԱՐԵՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

Ձեռք բերել ջրատար խողովակներ, համապատասխան տեխնիկա,համայնքի բնակիչներից կազմել խումբ աշխատանքները վերահսկելու համար:

### ԾՐԱԳՐԻՑ ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրագործումով թաղամասը կստանա որակյալ խմելու ջուր, կբարելավվի թաղամասի բնակիչների կենցաղային կյանքը:

### ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Ծրագրի իրականացումը կկատարվի Մեղովկա համայնքի 2017 թվականի բյուջեի ֆոնդային մասի հաշվին:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՆՆԵՐ

Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությանը խոչընդոտող գործոններ են՝  
Գործազրկությունը

Կրուզլայա շիշկա գյուղի խմելու ջրի ցանցի քայքայված վիճակը

Միջոցների սղությունը

Փողոցային լուսավորության բացակայությունը

Համայնքի հասարակական տրանսպորտի ախատանքի կազմակերպմանը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանմանը և շահագործմանը խոչընդոտող գործոններն են՝

Միջհամայնքային, ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների քայքայված վիճակը,

Հանրային տրանսպորտի անբավարար վիճակը,

Կանգառների բացակայությունը, ճանապարհային նշանների բացակայությունը

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐՆ ԵՆ՝

Ոռոգման ցանցի բացակայությունը,

Որակյալ սերմի բացակայությունը,

Սպառման շուկայի դժվար հասանելիությունը

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐՆ ԵՆ՝

Աղբահեռացում չկազմակերպելը,

ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐՆ ԵՆ՝

Գործարար միջավայրի բացակայությունը,

Ձեռնարկատիրությունների բացակայությունը,

Երիտասարդների միգրացիան

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԾՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱԶՄԱԶԱՎԱԿՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐՆ ԵՆ՝

Երիտասարդների չամուսնանալը,

Երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը,

Պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐՆ ԵՆ՝

Համայնքում համապատասխան պայմաններ չունենալը

ՀՄՄՍՅՆՔՈՒՄ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ, ՄԱՌՋԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ, ՖԻՆԱՆՍԱՎԵՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍՆԱԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐՆ ԵՆ՝

Համայնքի երիտասարդների կամավորության պակասը,  
Հանրային համախմբվածության և մասնակցության թույլ լինելը,  
Տեղեկատվական տեխնոլոգիաներին չտիրապետելը

#### ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ԾՆՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում,  
Նրանք բավարարված չեն ոռոգման ջրով, իսկ նրանց ապրուստի հիմնական միջոցն  
ստացվում է բանջարա-բոստանային մշակաբույսերից  
Հնարավորություն չունեն որակյալ սերմեր և վառելանյութ ձեռքբերելու  
Գյուղացին համայնքի պրոբլեմները իր սեփականը չի համարում  
Գյուղացին չի կարողանում իրացնել իր արտադրանքը  
Գյուղացին չի կարողանում կատարել իր հարկային պարտավորությունները  
Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա  
աշխատանքների  
Կենցաղային ախբահերացում չի կատարվում

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ  
ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

#### ՀԱՄԱՅՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

Բանիմաց աշխատուժի առկայություն

Միջնակարգ դպրոցի առկայություն

Բուժամբուլատորիայի առկայություն

Բերրի հողերի առկայություն

Հեռահաղորդակցության առկայություն

Գազաֆիկացման առկայություն

Ուղղակի ընտրությամբ ղեկավար ընտրելու հնարավորություն

#### ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄ

Ոռոգման ցանցերի բացակայություն

Խմելու ջրի ցանցի անմխիթար վիճակ

Սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքներ

Ֆինանսական ռեսուրսների բացակայություն

Ծնելիության նվազում

Արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճ

Ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակ

Տրանսպորտային ցանցի բացակայություն

Աշխատատեղերի պակաս

ՀԱՄԱՅՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բերրի հողերի առկայություն

Անասնապահության զարգացում

ՀԱՄԱՅՆՔԻ ՄՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ

Տարերային աղետների վտանգ

Գյուղմթերքների գների նվազում

Գյուղատնտեսական մթերքների արտահանման դժվարություն

Սպառման շուկաների դժվար հասանելիություն

Խիստ կլիմա(Ցրտահարություն)

Արագադրի առաջացման վտանգ

ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄ ՈՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Համայնքի զարգացման տեսլականն է

Ունենալ զարգացաց և հզոր համայնք, որտեղ մարդիկ ապրում են արժանապատիվ կյանքով

Համայնքի ուժեղ կողմերի և միկրո-հնարավորությունների վրա հիմնված վեր հանել համայնքի խնդիրները, և խոչնդոտները հաղթահառելով ապահովել

կայուն, շարունակական զարգացում ու հզորացում

Հետևողականորեն բարեփոխումնոր կատարել ու միջոցով բարելավել համայնքի

բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զարգացած, գեղեցիկ և բառեկարգ

Բառեփոխումներ կատարելով նախատեսվում է հետևյալ նպատակներին

Գյուղաքցիներին ապահովել մաքուր դմելու ջրով

Զարգացնել բուսաբուծություն ու անասնաբուծությունը

Ակտիվացնել բնակչության մշակութային կյանքը,

Կազմակերպել համայնքաբնակների հանգիստը

Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը

Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը նվազեցնել  
Համայնքի սեփական տարեկան ակամուտնորը հասցնել 80% ով աճի

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Համայնքի գույքը կառավարել

Նախադպրոցական կրթությունը և արտադպրոցական դաստիարակությունը կազմակերպել

Ակտիվ մշակութային և մարզական կյանքն ակտիվացնել երիտասարդության ներգրավմամբ

Բարելավել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը

Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը

Աջակցել պետության պաշտպանության իրականացման հարցում

Ապահովել համայնքում բնակչության առողջուփյան պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը արդյունավետ և մատչելի

Բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը

Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցությունը խթանել

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔԱԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ, ԿՐԹՔԻԹՅՈՒՆ

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց, ունի 56 աշակերտ:

Դրոցը ունի 21 աշխատող

Կրուզլայա- Շիշկա գյուղի տարրական դպրոցը չի գործում

Համայքը ղեկավարում է բնակչության կողմից ընտրված համայնքի ղեկավարը

Համայնքապետարանը ունի երեք աշխատող

Համայնքապետարանի աշխատակազմի կառուցվացքը բերված է թիվ-1 հավելվածում

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի բնակչության առկա թիվը –555

0-4 տարեկան-35

5-7 տարեկաններ-29

8-14 տարեկաններ-51

15 տարեկան-8

17-18 տարեկաններ-4

63 և բարձր-41

Թոշակառուներ-48


Ընտանիքների (ծխերի)-187

Նպաստառու ընտանիքներ-27


Փախստականներ(ծուխ)-27

Մեղովկա համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ



ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ  
ՄԱՍՆԱԳԵՏ



ՄԵԴԵՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ

Հ/Հ	ԳՈՒՅՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԻԱՎՈՐ
1	Համայնքապետքրանի վարչական շենք	1
2	Գրադարան	2
3	Ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ	12
4	Ներհամայնքային կամուրջներ	-
5	Հուշարձան	1
6	Գերեզմանատուն	2
7	Մարդատար ավտոմեքենա վազ-2121	1
8	Խմելու ջրի համակարգ /գ. Կրուզլայա-Շիշկա/	1